**Արձանագրություն N 4**

***2025 թվականի Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի***

ք. Երևան

«19» «Փետրվարի» 2025թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Հ. Մնացականյան |
| Հանձնաժողովի անդամներ | Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Սարգսյան |

***1. Գնման ընթացակարգի մասնակից «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցով ԵԴ2/10267/02/24 դատական գործի վճռի մասով***

---

***(Հ. Մնացականյան)***

02.12.2024 թվականին <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումին կից <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ-ն հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն) է ներկայացրել Դատարան:

02.12.2024 թվականին թիվ ԵԴ2/10267/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է (հասանելի է դարձել) 03.12.2024 թվականին:

09.12.2024 թվականին Դատարանը «Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործը գրավոր ընթացակարգով քննելումասին» որոշում է կայացրել և արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 14.01.2025 թվականին:

09.12.2024 թվականին Դատարանը «Հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քննության առնելու մասին» որոշում է կայացրել, որով որոշել է.

1. թիվ ԵԴ2/10267/02/24 քաղաքացիական գործով հայցվոր «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի միջնորդությունը հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին, բավարարել.

1.1. ՀՀ առողջապահության նախարարությանը արգելել կատարել որևէ գործողություն ուղղված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված թիվ 24551588582 բանկային երաշխիքով առկա գումարի գանձմանը՝ մինչև վերջնական եզրափակիչ դատական ակտի կայացում:

15.01.2025թ. gnumner.am կայքում հրապարակվել է վերոգրյալ դատական գործով հետևյալ վճիռը՝

«1. «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը բավարարել **ամբողջությամբ**.

***1.1. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.11.2024 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը:***

***1.2. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.11.2024 թվա կանին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ թիվ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:»***

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի պահանջների գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ հայցադիմումը վարույթ ընդունելու որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

«ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների հայտերը գնահատելիս 12.11.2024թ. կայացրել է որոշում կասեցնել հայտերի գնահատումը և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները, տվել է հնարավորություն շտկել արձանագրած անհամապատասխանությունները, այդ թվում նաև «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդում շտկումները սահմանված ժամկետում չի իրականացրել (էլեկտրոնային աճուրդ համակարգով իրականացված գնման ընթացակարգերի արդյունքում կնքվելիք պայմանագիրը գեներացվում է ծրագրով, իսկ վերջինիս հավելվածներում՝ տեխնիկական բնութագրերում գեներացվում է հենց էլեկտրոնային աճուրդում գեներացված՝ մասնակիցների կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը), այլ 14.11.2024թ. շտկված

տեխնիկական բնութագրերը ուղարկել է գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին (կցվում է):

Հաշվի առնելով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված վճիռը և այն հանգամանքը, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն թեև էլեկտրոնային փոստի միջոցով, այնուամենայնիվ ուղարկել է շտկված տարբերակները, գնահատող հանձնաժողովը որոշեց գնահատել մասնակցի կողմից ներկայացված շտկված տեխնիկական բնութագրերը և հրավերին համապատասխանելու դեպքում վերջինիս հետ կնքել պայմանագիր: Գնահատելուց արձանագրվել է, որ «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ապրանքները (դեղերը) ներկայացված են ինչպես Հայաստանի Հանրապետությունում գրանցված այնպես էլ չգրանցված տարբերակներով, և քանի որ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են «Դեղերի մասին» ՀՀ օրենքի պահանջները, ուստի կնքվելիք պայմանագրում կներառվեն միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող դեղերը:

Որոշվեց՝ «ՀՀ ԱՆ ԱՃԱՊՁԲ-2025/3/1» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել նաև «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ն 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով և կնքել պայմանագիր 107,038,800 ՀՀ դրամ պայմանագային գումարով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Հ. Մնացականյան

Անդամներ՝ ---------------------- Մ. Հարությունյան

---------------------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------------------- Հ. Սարգսյան

## ՆԿԱՐԱԳԻՐ
### առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԱԷՄՋԻ» ՍՊԸ -ն ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1

մասնակցի անվանումը

ծածկագրով մրցույթի շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագրերը |
| 5 | Կոնվուլեքս, Դեպակին էնտերիկ 300, Օրֆիրիլ 300, Աբսենոր 300 | Կոնվուլեքս, Դեպակին էնտերիկ 300, Օրֆիրիլ 300, Աբսենոր 300 | Գ.Լ. Ֆարմա Գմբհ, Սանոֆի-Ավենտիս, Դեզիտին Արցնայմիթթել ԳՄԲՀ, Օրիոն Քորփորեյշն | Վալպրոաթթու (վալպրոատի նատրիում ) դեղահատեր աղելույծ 300մգ: Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով: Հայաստանի Հանրապետության ռեգիոնն չհանդիսացող կազմակերպությունները պարտավոր են մատակարարումն իրականացնել ք.Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով դիդիփի ինկոտերմսի (DDP Incoterms) պահանջներին համապատասխան: Սույն գնման ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով: Սույն գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են «Դեղերի մասին» ՀՀ օրենքի պահանջները: |
| 6 | Կոնվուլեքս, Դեպակին Քրոնո, Օրֆիրիլ Լոնգ 300, Վալպրոաթթու Սանդոզ, Վալպրոաթթու Ռատիոֆարմ, Վալպրոաթթու Աուրոբինդո, Վալպրոիկո Գեներիս 300մգ, Դիպլեքսիլ 300, Վալպրոաթթու Աստովիտաս, Աբսենոր Դեպոտ 300 | Կոնվուլեքս, Դեպակին Քրոնո, Օրֆիրիլ Լոնգ 300, Վալպրոաթթու Սանդոզ, Վալպրոաթթու Ռատիոֆարմ, Վալպրոաթթու Աուրոբինդո, Վալպրոիկո Գեներիս 300մգ, Դիպլեքսիլ 300, Վալպրոաթթու Աստովիտաս, Աբսենոր Դեպոտ 300 | Գ.Լ.Ֆարմա Գմբհ, Սանոֆի Ուինթրոպ Ինդաստրի, Դեզիտին Արցնայմիթթել ԳՄԲՀ, Սալուտաս Ֆարմա ԳմբՀ, Մերկլ ԳՄԲՀ Ռատիոֆարմի համար, ԱՊԼ Սվիֆթ Սալտա Աուրոբինդոյի համար, Ջեներիս Ֆարմասյուտիկա Ս.Ա., Տեքնիֆար-Ինդուստրիա Տեքնիկա Ֆարմասյութիքա, Աուրովիտաս Սպեյն ՍԱՈՒ, Օրիոն Քորփորեյշն | Վալպրոաթթու (նատրիում վալպրոատ) դեղահատեր երկարատև ձերբազատմամբ թաղանթապատ 300մգ: Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ք. Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենդ չհանդիսացող կազմակերպությունները պարտավոր են մատակարարումն իրականացնել ք.Երևան, Տիտոգրադյան 14/10 հասցեով դիդիփի ինկոտերմսի (DDP Incoterms) պահանջներին համապատասխան: Սույն գնման ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով: Սույն գնման ընթացակարգի և պայմանագրերի կատարման ընթացքում կիրառվում են «Դեղերի մասին» ՀՀ օրենքի պահանջները: |

« ԱԷՄՋԻ » ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյան

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

«ԱԷՄՋԻ» «АЕМДЖИ» «AMG» 02863111

Կ. Տ.

**Գործ թիվ ԵԴ2/10267/02/24**

**ՎՃԻՌ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ**

**Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը(այսուհետ՝ դատարան),նախագահությամբ Դատավոր՝ Արման Օհանյանի**

---

Դատավարության մասնակիցներ՝

Հայցվոր՝

**«ԱԷՄՋԻ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

Ծանուցման Գործունեության հասցե՝ ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱԲՈՎՅԱՆ Փ., շենք 23

Պետ. գրանցման համար՝273.110.1236379

ՀՎՀՀ՝ 02863111

**Ներկայացուցիչ՝**
**փաստաբան Լևոն Պարգևի Օհանյան**

Բնակության Հաշվառման հասցե՝ ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԻՍՐԱՅԵԼՅԱՆ Փ., տուն 30/4

Նույնականացման քարտ 013373451 տրված՝ 16/08/2022 թ., 011 կողմից, վավերական է՝ 16/08/2032

Արտոնագրի համար՝ 1551

**Ներկայացուցիչ՝**
**Էդուարդ Վաչագանի Փոթոյան**

Հաշվառման հասցե՝ ՀՀ, ՇԻՐԱԿ, համայնք ԱՐԹԻԿ, ԱՐԹԻԿ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ 2 ՆՐԲ, տուն 4/3

Անձնագիր AV0221203 տրված՝ 17/05/2022 թ., 007 կողմից, վավերական է՝ 17/05/2032

Պատասխանող՝

Ծանուցման հասցե՝ ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ, տուն 3

Պետ. գրանցման համար՝2861841124131

ՀՎՀՀ՝ 02507171

ք. Երևան

2025թ. հունվարի 15-ին

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան) (դատավոր Արման Օհանյան) գրավոր ընթացակարգով քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<ԱԷՄՋԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր կամ <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ) ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող կամ Նախարարություն)՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին.

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**II**

**(ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ)**

1. ***Գործի դատավարական նախապատմությունը.***

02.12.2024 թվականին <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի կողմից վարվող էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումին կից <<ԱԷՄՋԻ>> ՍՊԸ-ն հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ միջնորդություն (այսուհետ նաև՝ Միջնորդություն) է ներկայացրել Դատարան:

02.12.2024 թվականին հա. ԵԴ2/10267/02/24 քաղաքացիական գործը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել է Դատարանի դատավոր Ա.Օհանյանին, իսկ քաղաքացիական գործը Դատարանի դատավոր Ա.Օհանյանին հանձնվել է (հասանելի է դարձել) 03.12.2024 թվականին:

09.12.2024 թվականին Դատարանը <<Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և գործը գրավոր ընթացակարգով քննելու

# Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցը բավարարել **ամբողջությամբ**.

***1.1. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.11.2024 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին կայացված որոշումը։***

***1.2. անվավեր ճանաչել ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար 2025 թվականի անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 22.11.2024 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ թիվ <<ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/3/1>> ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը։***

2. ՀՀ առողջապահության նախարարությունից հօգուտ <<ԱԷՄՁԻ>> ՍՊԸ-ի բռնագանձել 200 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար։

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված։

4. **Վճռի <<Եզրափակիչ>> մասի 1.1., 1.2. և 2. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**։

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա.Օհանյան) 13.09.2024 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի փաստացի կատարումը։

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում։

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Digitally signed by OHANYAN ARMAN
4014820192
Date: 2025.01.15 11:14:36 AMT

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*